



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան  
27 փետրվարի 2020թ.

ԲԴԽ-4-Ո-Կ-1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԱՑԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 14.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԲԴԽ-8-Ո-Կ-04 ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՀԻՄՔՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝

ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*նախագահությամբ՝*

*Բարձրագույն դատական խորհրդի նախագահի՝*

*Ռ. Վարդագարյանի,*

*մասնակցությամբ՝ անդամներ՝*

*Գ. Բեքմեզյանի,  
Հ. Հովհաննիսյանի,  
Մ. Մակյանի,  
Լ. Մելիքջանյանի,  
Ա. Մխիթարյանի,  
Ս. Չիչոյանի,  
Վ. Քոչարյանի*

*Արայիկ Մելքումյանի ներկայացուցիչ՝*

*Դ. Գրիգորյանի*

*քարտուղարությամբ՝*

*Մ. Թելոյանի,*

դռնբաց նիստում, քննության առնելով «Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ

03.02.2019թ.-ին Արայիկ Մելքումյանի կողմից Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված դիմումը,

## **Պ Ա Ր Զ Ե Ց.**

### **1. Գործի նախապատմությունը.**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախկին դատավոր Արայիկ Մելքումյանի լիազորությունները դադարեցվել են Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում՝ 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշմամբ՝ էական կարգապահական խախտման հիմքով:

Արայիկ Մելքումյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը և 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Սահմանադրական դատարանը 15.11.2019թ. ընդունել է ՍԴՈ-1488 որոշումը, որով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Արայիկ Մելքումյանը 03.02.2020թ. դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ՝ պահանջելով վերանայել Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2020թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը, Արայիկ Մելքումյանին վերականգնել իր նախկին պաշտոնում և վճարել միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

### **2. Դիմողի դիրքորոշումը.**

Դիմողը, հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասին, 157-րդ հոդվածի 3-րդ մասին, 157-րդ հոդվածի 4-րդ մասին, 157-րդ հոդվածի 5-րդ մասին, 157-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերին, նշել է, որ Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի վերանայելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին իր որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով:

Դիմողը նշել է նաև, որ նոր հանգամանքները հիմք են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշման վերանայման համար, եթե Սահմանադրական դատարանը կարգապահական վարույթով կիրառված օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը

համապատասխանող, սակայն դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող միաժամանակ գտել է, որ այն անձի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ: Դիմողը նաև ընդգծել է, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում նոր որոշում, վերականգնում է դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում և վճարում միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

### **3. Սույն գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

1. Բարձրագույն դատական խորհուրդը 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշմամբ դադարեցրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանի լիազորությունները՝ էական կարգապահական խախտման հիմքով:

2. Արայիկ Մելքումյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հանրապետության Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը և 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Արայիկ Մելքումյանը դիմելով Սահմանադրական դատարան՝ պնդել է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածը որպես էական կարգապահական խախտման տեսակ նշել է «պաշտոնի հետ անհամատեղելի», այլ ոչ թե «կարգավիճակի հետ անհամատեղելի» եզրույթը: Դիմողի կարծիքով «դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի» արտահայտության ներքո պետք է հասկանալ վարքագծային անհամատեղելիություն, վարքագծի նորմերի այնպիսի խախտում կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Այնինչ, սույն պարագայում, Բարձրագույն դատական խորհուրդը դատավորի կողմից թույլ տրված սխալը նույնականացրել է դատավորի պաշտոնի հետ անհամատեղելիության հետ և սահմանել լիազորության դադարեցման առանձին հիմք:

3. Սահմանադրական դատարանը 15.11.2019թ. ընդունել է ՍԴՈ-1488 որոշումը, որով Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը:

4. Արայիկ Մելքումյանը 03.02.2020թ. դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ՝ պահանջելով վերանայել 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը՝ նոր հանգամանքի հիման վրա:

#### **4. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննարկելով Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը վերանայելու հարցը, լսելով Արայիկ Մելքումյանի ներկայացուցչի բացատրությունը, ուսումնասիրելով դիմումին կից ներկայացված փաստաթղթերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ներկայացված դիմումը ենթակա է բավարարման մասնակի՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը վերանայելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդը կարևորում է հետևյալ հարցադրումները.

- 1. արդյո՞ք առկա է հիմք Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը վերանայելու համար,*
- 2. արդյո՞ք Արայիկ Մելքումյանը պետք է և կարող է վերականգնվել նախկինում իր զբաղեցրած պաշտոնում,*
- 3. արդյո՞ք Արայիկ Մելքումյանին պետք է Վճարվի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատված համար:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի» 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի վերանայելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին իր որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են Բարձրագույն դատական խորհրդի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման համար, եթե՝ 1) Սահմանադրական դատարանը կարգապահական վարույթով կիրառված օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն անձի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը վերանայելու դիմումը կարող է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմնի կամ այն դատավորի կողմից, որի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշում:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե Բարձրագույն դատական խորհուրդը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերացնում է որպես կարգապահական պատասխանատվություն դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումը, ապա որոշում է կայացնում այդ դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնելու մասին: Տվյալ դատարանում համապատասխան մասնագիտացման դատավորի թափուր պաշտոն չլինելու դեպքում դատավորը ձեռք է բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ: Նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնվելու դեպքում դատավորին վճարվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Ուսումնասիրելով 15.11.2019թ. ՄԴՈ-1488 որոշումը Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այն հանդիսանում է նոր հանգամանք և հիմք՝ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը վերացնելու համար, քանի որ Սահմանադրական դատարանը Արայիկ Մելքումյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կիրառված իրավական ակտի դրույթը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը, ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը ենթակա է վերացման՝ նոր հանգամանքի առկայության հիմքով:

Արայիկ Մելքումյանին իր նախկին պաշտոնում վերականգնելու առնչությամբ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշմամբ դադարեցվել են Արայիկ Մելքումյանի՝ որպես Երևան քաղաքի առաջին աստանի դատարանի դատավորի լիազորությունները: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը վերացնելու արդյունքում Արայիկ Մելքումյանը պետք է վերականգնվի իր նախկին պաշտոնում՝ այսինքն Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատավորի պաշտոնում՝ քաղաքացիական մասնագիտացմամբ:

Սակայն Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանում ներկա պահին առկա չէ քաղաքացիական մասնագիտացման դատավորի թափուր պաշտոն, ուստի անհնար է Արայիկ Մելքումյանին վերականգնել իր նախկին պաշտոնում, և «Հայաստանի Հանրապետության

դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Արայիկ Մելքունյանը ձեռք է բերելու ռեզերվային դատավորի կարգավիճակ (հիմք՝ դատական իշխանության պաշտոնական կայքէջում ներկա պահին դատավորների թափուր հաստիքների վերաբերյալ հրապարակված տեղեկատվությունը):

Ինչ վերաբերում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի վճարման պահանջին, ապա Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է, որ միջին աշխատավարձը ենթակա է վճարման հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար այն դեպքում, երբ դատավորը վերականգնվում է **նախկինում զբաղեցրած** պաշտոնում՝ այս դեպքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավորի պաշտոնում: Ռեզերվային դատավորի կարգավիճակ ձեռք բերելու արդյունքում իր նախկինում զբաղեցրած պաշտոնում չվերականգնվելու դեպքի համար՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը չի նախատեսում միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար ստանալու հնարավորություն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ռեզերվային դատավորի կարգավիճակ ունեցող անձին ենթակա է վճարման աշխատավարձ՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց դրամական օգնության, կադրերի ռեզերվում (կադրերի տրամադրության տակ) գտնվելու, աշխատանքից ազատման, մահվան դեպքերում վարձատրության, աշխատաժամանակի հաշվարկի, արտաժամյա, գիշերային, հանգստյան, տոներին և հիշատակի օրերին կատարված

աշխատանքի, պարապուրդի, ինչպես նաև ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում վարձատրության հետ կապված՝ սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Արայիկ Մելքումյանին վճարվող աշխատավարձի հաշվարկի սկիզբը պետք է համարել ռեզերվային դատավորի կարգավիճակ ձեռք բերելու պահը՝ նրան վճարելով մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 157-րդ հոդվածի 1-ին մասով, 157-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 8-9-րդ մասերով, և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու դիմումը բավարարել մասնակի.

ա) Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019թ. թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-4 որոշումը՝ «Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» վերացնել:

բ) Արայիկ Մելքումյանին ընդգրկել դատավորների ռեզերվում:

գ) Արայիկ Մելքունյանի պահանջը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելու մասով, մերժել:

զ) Արայիկ Մելքունյանին վճարվող աշխատավարձի հաշվարկի սկիզբը համարել ռեզերվային դատավորի կարգավիճակ ձեռք բերելու պահը՝ նրան վճարելով մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

*ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՍՏԱԿԱՆ*

*ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ*

*ԱՆԴԱՄՆԵՐ՝*

*առկա է հատուկ կարծիք*

*Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ*

*Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ*

*Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

*Ս. ՄԱԿՅԱՆ*

*Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ*

*Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ*

*Ս. ՉԻՉՈՅԱՆ*

*Վ. ՔՈՉԱՐՅԱՆ*